ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **25/մարտի/2021 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...8..... անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալներ Ս. Մարգարյանը և Ա. Խաչատրյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հ. Դավթյանը, ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյանը, գլխավոր մասնագետ–ճարտարապետ Ա. Գառնիկյանը, վարչական ղեկավարները:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գոհար Թադևոսյանը

Լսեցին
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25–Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 25–ի նիստի հետևյալ *օրակարգը*.

1.1. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Ջերմուկի տարածքային բաժնի գործունեությունը դադարեցնելու, Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 51-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.2. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 77-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.3. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու համար Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին դիմելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.4. Ջերմուկ համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 23-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.5. Արտաբյուջետային հաշիվ բացելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.6. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 81-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.7. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 80-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.8. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 26-ի N 37-Ա որոշման 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.9. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 79-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.10. Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 25-ի N 10-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.11. Ջերմուկ քաղաքի գերեզմանատան ընդլայնման համար հողատարածքի գնումը անհետաձգելի համարելու մասին.

զեկ. համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյան

1.12. Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 18-ի N 42-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

զեկ. համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյան

1.13. Դրամական հատկացում կատարելու մասին.

զեկ. համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----8---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՋԵՐՄՈՒԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 51-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Հիմք ընդունելով ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-98-Ն) 1-ին հոդվածը, ղեկավարվելով «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ և 36-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության 2021 թվականի փետրվարի 25–ի N 251-Ն որոշման 7-րդ կետով՝

1. Դադարեցնել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Ջերմուկի տարածքային բաժնի գործունեությունը:

2. Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 18-ի ««Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու և «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին» N 51-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ դադարեցնել որոշմամբ հաստատված հավելվածի «3.4 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ» գլխի գործողությունը և ճանաչել ուժը կորցրած:

3. Հաստատել սույն որոշման 2-րդ կետով «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության մեջ կատարված փոփոխությունը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի ապրիլի 1-ից:

Կողմ----8---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15-Ն/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 77-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների 2021 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 77-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա/ որոշմամբ հաստատված հավելված 1-ից՝ «*Առանձնացված սպորտաբաժանումներ*» բաժնից հանել «1.Սոցիալական աջակցության Ջերմուկի տարածքային բաժին -5» բառերն ու թիվը, «*Ընդհամենը՝ թվաքանակ - 38*» արտահայտության մեջ «38» թիվը փոխարինել «33» թվով,

բ/ որոշմամբ հաստատված հավելված 2-ից հանել «Սոցիալական աջակցության Ջերմուկի տարածքային բաժին» հաստիքացուցակ–հատվածը:

գ/ որոշմամբ հաստատված հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարի կողմից Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում սույն որոշմամբ պայմանավորված փոփոխությունները կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ----------8---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 16-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի

1.Դիմել Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2016 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի

համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N 178-Ա հրամանով հաստատված անվանացանկից համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի երրորդ ենթախմբի 1-ին, առաջատար պաշտոնների խմբի 3-րդ ենթախմբի 1-ին, կրտսեր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբի 5-րդ և 6-րդ, կրտսեր պաշտոնների խմբի 3-րդ ենթախմբի 1-ին կետերը հանելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարությանը օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ----------8---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 17-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 23-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ և 37-րդ հոդվածներին համապատասխան՝

1. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Ջերմուկի տարածքային բաժնի գործունեության դադարեցմամբ պայմանավորված ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Ջերմուկի համայնքի սոցիալական աջակցության Ջերմուկի տարածքային բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 23-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ----------8---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18-Ն/

Լսեցին

ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի՝

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության պետական գործակալության ֆինանսավորմամբ, HNDP միջազգային

ծրագրի շրջանակներում, Ջերմուկի ՀՏԿ համայնքում իրականացվող «Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների աշխատանքային փորձ ձեռք բերելու աջակցության տրամադրման» ծրագիրը իրականացնելու համար արտաբյուջետային հաշիվ բացելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----8---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 81-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱՋԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 81-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
1) որոշման 1-ին կետում «*673903.26*» թիվը փոխարինել «*676269.46*» թվով
2) որոշման 1-ին կետի 1.1 ենթակետում «612987,736.9» թիվը փոխարինել «*615353,936.9*» թվով
3) որոշմամբ հաստատված հավելվածի Հատված 1-ի 1000 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «583318.6» թիվը փոխարինել «585684.8» թվով, 1300 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «301905.5» թիվը փոխարինել «304271.7» թվով, 1340 և 1342 տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «3703.3» թիվը փոխարինել «6069.5,» թվով, 1342Գ տողի «0» թիվը փոխարինել «2366.2» թվով:

4) որոշմամբ հաստատված հավելվածի Հատված 2-ի 2000 տողի 6-րդ սյունակում «657603.3» թիվը փոխարինել «659969.5» թվով, 7-րդ սյունակում «612987.7» թիվը փոխարինել «615353.9» թվով, 2200, 2250, 2251 տողերի 6-րդ և 7-րդ սյունակումներում «10000.0» թիվը փոխարինել «6000.0» թվով, 2400 տողի 6-րդ սյունակում «32756.6» թիվը փոխարինել «35256.6» թվով, 8-րդ սյունակում « -16300.0» թիվը փոխարինել «-13800.0» թվով, 2470 և 2473 տողերի 6-րդ սյունակում «4464.2» թիվը փոխարինել «6964.2» թվով, 8-րդ սյունակում «0» թիվը փոխարինել «2500» թվով , 2600 տողի 6-րդ սյունակում «78796.7» թիվը փոխարինել «75296.7» թվով, 8-րդ սյունակում «44615.5» թիվը փոխարինել «41115.5» թվով, 2640 և 2641 տողերի 6-րդ սյունակում «68549.0» թիվը փոխարինել « 65049.0» թվով, 8-րդ սյունակում «44615.5» թիվը փոխարինել «41115.5» թվով, 2800 տողի 6-րդ սյունակում «38628.5» թիվը փոխարինել «39628.5» թվով, 8-րդ սյունակում «0,» փոխարինել «1000.0» թվով, 2820 և 2821 տողերի 6-րդ սյունակում «10927.4» թիվը փոխարինել «11927.4» թվով, 8-րդ սյունակում «0» թիվը փոխարինել «1000.0» թվով, 3000 տողի 6-րդ և 7-րդ սյունակներում «10800» թիվը փոխարինել «17166.2» թվով, 3030 և 3031 տողերի 6-րդ և 7-րդ սյունակներում «0» փոխարինել «1500.0» թվով, 3040 և 3041 տողերի 6-րդ և 7-րդ

սյունակներում «2000.0» փոխարինել «4500.0» թվով, 3090 և 3091 տողերի 6-րդ և 7-րդ սյունակներում « 0» թիվը փոխարինել «2366.2» թվով:

5) որոշմամբ հաստատված հավելվածի Հատված 3-ի 4000 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «657603.3» և «612987.7» թվերը համապատասխանաբար փոխարինել «659969.5» և «615353.9» թվերով, 4050 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «612987.7» թիվը փոխարինել «615353.9» թվով, 4100 և 4110 տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «146199.2» թիվը փոխարինել «148225.4» թվով, 4111 տողի 4-րդ և 5-րդ սյունակների «128853.7» թիվը փոխարինել «130879.9» թվով, 4200 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «66049.1» թիվը փոխարինել «66389.1» թվով, 4210 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «35109.8» թիվը փոխարինել «35737.0» թվով, 4212 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «30220.2» թիվը փոխարինել «30330.2» թվով, 4214 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «2805.1» թիվը փոխարինել «2827.3» թվով, 4216 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «0» թիվը փոխարինել «495» թվով, 4220 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «2654.0» թիվը փոխարինել «2784.0» թվով, 4221 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «1104.0» թիվը փոխարինել «1234.0» թվով, 4260 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «10438.1» թիվը փոխարինել «10020.9» թվով, 4261 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «1557.6» թիվը փոխարինել «1635.4» թվով, 4268 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «2211.2» թիվը փոխարինել «1716.2» թվով, 4520 և 4522 տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «3671.4» թիվը փոխարինել «0» թվով, 4533 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «0» թիվը փոխարինել «3671.4» թվով, 4600 և 4630 տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «10800.0» թիվը փոխարինել «14800.0» թվով, 4634 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «7500.0» թիվը փոխարինել «11500.0» թվով, 4700 տողի 4-րդ և 5-րդ սյունակներում «100346.3» թիվը փոխարինել «96346.3» թվով, 4710 և 4712 տողերի 4-րդ և 5-րդ սյունակներում «10300.0» թիվը փոխարինել «6300.0» թվով, 5110 և 5113 տողերի 4-րդ և 6-րդ սյունակներում «51677.5» թիվը փոխարինել «48177.5» թվով, 5121 տողի 4-րդ և 6-րդ սյունակներում «0» թիվը փոխարինել «803.0» թվով, 5122 տողի 4-րդ և 6-րդ սյունակներում «6300.0» թիվը փոխարինել «5497.0» թվով, 5132 տողի 4-րդ և 6-րդ սյունակներում «0» թիվը փոխարինել «3500.0» թվով :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ----8---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20-Ն/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ի N 80-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասին և 34-րդ հոդվածին համապատասխան՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «2021 թվականի համար Ջերմուկ համայնքի և համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» N 80-Ն որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ և 10-րդ ենթակետերով՝

«9) «Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի կողմից ֆիթնես-մարզումների ծառայությունների դիմաց գանձվող վճարի չափը՝ անհատական մարզումների մեկ ժամը՝ 1000 (հազար) դրամ, մարզիչի հետ մարզումների 12 պարապմունքը՝ 10 000 դրամ:

10) Ջերմուկ համայնքի սեփականությունը հանդիսացող չափագրական գործիքի օգտագործման տրամադրման դիմաց գանձվող վճարի չափը՝ հետևյալ դրույքաչափերով՝

ա/ մինչև 100 քմ շենք-շինությունների չափագրում- 1 քմ՝ 100 դրամ,

բ/ 100 քմ-ից ավելի մակերեսով շենք-շինությունների չափագրում- 1 քմ՝ 150 դրամ,

գ/ մինչև 1000 քմ չկառուցապատված տնամերձ հողամասի չափագրում- 10 000 դրամ,

դ/ չկառուցապատված 1000 քմ-ից ավելի տնամերձ հողամասի չափագրում- 10 000 դրամ+1000 քմ-ից ավել յուրաքանչյուր 1 քմ՝ 10 դրամ,

ե/ մինչև 1 հա չկառուցապատված արտադրական, հասարակական և գյուղատնտեսական նշանակության հողամասերի չափագրում- 20000 դրամ,

զ/ 1 հա-ից ավելի գյուղատնտեսական հողամասերի չափագրում- յուրաքանչյուր 1 հա-ի համար 20 000 դրամ,

է/արդյունաբերական, հասարակական (արտադրական տարածքներ, հանգստի, հյուրանոցային համալիրներ եւ այլն) կառուցապատված հողամասերի և շենք, շինությունների, ենթակառուցվածքների չափագրումը- պայմանագրային հիմունքներով»:

2. Ընդունել ի գիտություն, որ «Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի իրավահաջորդը «Ջերմուկ համայնքի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ն է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2021 թվականի ապրիլի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Կողմ----------8---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21-Ն/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 37-Ա ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ԿԵՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդված հիման վրա

1. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 26-ի ««Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի

կենտրոն» ՀՈԱԿ–ի կողմից կողմից մատուցվող ծառայությունների և դրանց դիմաց գանձվող դրույքաչափերի մասին» N 37-Ա որոշման 2-րդ կետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----8---- *Դեմ*----0---- *Չեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 79-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 79-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա/ որոշման 2.1 և 2.2 կետերից հանել «պատերազմի հետևանքով Ջերմուկ քաղաքում բնակություն (թե՛ ժամանակավոր, թե՛ մշտական) հաստատած արցախահայ ընտանիքների, այդ» բառերը,

բ/ որոշման 2.1 և 2.2 կետերում «ստացածների» բառը փոխարինել «ստացած և հաշմանդամի կարգավիճակ ունեցողների» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----8---- *Դեմ*----0---- *Չեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23–Ն/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասին և 34-րդ հոդվածին համապատասխան

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 25-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գները հաստատելու մասին» N 10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝ որոշման հավելվածի ցանկը 18-րդ տողից հետո լրացնել նոր՝ 19-27-րդ տողերով՝ հետևյալ բովանդակությամբ՝

19	գյուղատնտեսական գործունեության համար	գյուղ Կարմրաշեն	0,65035	150000	10-027-0101-0058	գյուղատնտեսական	վարելահող
20	գյուղատնտեսական գործունեության համար	գյուղ Հերհեր	0,83782	70000	10-028-0174-0016	գյուղատնտեսական	այլ հողատեսք
21	գյուղատնտեսական գործունեության համար	քաղաք Ջերմուկ	0,20002	50 000	10-002-0450-0008	գյուղատնտեսական	այլ հողատեսք
22	գյուղատնտեսական գործունեության համար	քաղաք Ջերմուկ	0,2	50 000	10-002-0450-0009	գյուղատնտեսական	այլ հողատեսք
23	գյուղատնտեսական գործունեության համար	գյուղ Գնդեվազ	0,27686	50000	10-016-0101-0014	գյուղատնտեսական	այլ հողատեսք
24	գյուղատնտեսական գործունեության համար	քաղաք Ջերմուկ	4,03414	810000	10-002-0457-0068	գյուղատնտեսական	արոտավայր
25	գյուղատնտեսական գործունեության համար	քաղաք Ջերմուկ	1,93477	135000	10-002-0452-0002	գյուղատնտեսական	այլ հողատեսք
26	գյուղատնտեսական գործունեության համար	քաղաք Ջերմուկ	1,18439	90000	10-002-0450-0007	գյուղատնտեսական	այլ հողատեսք
27	գյուղատնտեսական գործունեության համար	քաղաք Ջերմուկ	1,14276	90000	10-002-0106-0012	գյուղատնտեսական	այլ հողատեսք

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----8---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԳՆՈՒՄԸ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք

ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները՝

1. Անհետաձգելի համարել Ջերմուկ քաղաքի գերեզմանատան ընդլայնման համար հողատարածքի գնումը:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ համապատասխան որոշմամբ թույլ տալու սույն որոշման 1-ին կետում նշված գնումը կատարելու մեկ անձից՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության, 71-րդ կետի 1-ին ենթակետի «ա», «բ», «գ», «դ» պարբերությունների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----8---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25–Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N 42-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 18-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Հերհեր գյուղում գտնվող հողամասը առանց մրցույթի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, ամսական վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին» N 42-Ա որոշման 1-ին կետում «50 000» թիվը փոխարինել «10 000» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ----8---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26-Ա/

Լսեցին

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Հետպատերազմյան իրավիճակով պայմանավորված Ջերմուկ քաղաքում տեղակայված ՀՀ զինված ուժերի զորամասին ըստ անհրաժեշտության ռատրակավարի ծառայություններ մատուցած «Ջերմուկ համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկի պայմանագրային հիմունքներով աշխատակից Հովհաննես Հովհաննիսյանին հատկացնել 200 000 (երկու հարյուր հազար) դրամ:

2. Ջերմուկի համայնքի 2021 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից ֆինանսական օգնություն տրամադրել համայնքի հետևյալ բնակիչներին՝

Արմինե Աղաջանյան՝ ....150000.... դրամի չափով,

Առուշան Այվազյանին՝ ....200000....դրամի չափով,

Ալլա Բաբայանին ....200000.... դրամի չափով,

Հունայան Էդվարդ ....200000.... դրամ չափով,

Ժենիկ Վասիլյանին՝ ....100000....դրամի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----8---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	ստորագրություն
Բաբայան Կավկազ Զավենի	
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի	
Բագրատյան Արտակ Կառլենի	
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	
Գրիգորյան Արմեն Գրիշայի	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Սարգսյան Հասմիկ Ժորայի	

Սիմոնյան Արտուշ Էդվարդի	
Ստեփանյան Գագիկ Ստեփանի բացակա	

Ջերմուկ համայնքի ղեկավար՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը _____